ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 68/6

07-ը հոկտեմբերի 2023 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդների համար նախապատրաստական դասընթացների իրականացման կարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդների համար նախապատրաստական դասընթացների իրականացման կարգը՝ համաձայն հավելված 5-ի,
2. Դասընթացի տարվա վճարաչափ սահմանել 160 000 (հարյուր վաթսուն հազար) դրամ մեկ առարկայի համար։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման և հրապարակման պահից։

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

**Հաստատված է**

**ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի**

**2023թ. հոկտեմբերի 07-ի նիստի թիվ 68/6 որոշմամբ**

**ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան**

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում (այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) դիմորդների համար բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու նախապատրաստական դասընթացների կազմակերպման և անցկացման ընթացակարգը:

1.2. Կարգը մշակված է ՀՀ «Կրթության մասին» օրենքի, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունների, ԵՊՀ ԻՄ-ի 2022-2026 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա:

1.3.Մասնաճյուղը կազմակերպում է նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով՝ առկա և հեռակա ուսուցմամբ դիմորդների համար:

1.4. Նախապատրաստական դասընթացներին մասնակցությունը վճարովի է:

## 2. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. **Նախապատրաստական դասընթացների անցկացման հիմնական նպատակն է.** ԵՊՀ ԻՄ-ի համար պատրաստել մուտքային պայմաններին համապատասխան որակյալ դիմորդներ:

2.2. **Նախապատրաստական դասընթացների անցկացման հիմնական խնդիրն է.**

2.2.1. ՀՀ հանրակրթական հաստատությունների ավարտական դասարանների և/կամ կուրսերի սովորողներին (դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ, նախնական մասնագիտական հաստատություններ), ինչպես նաև նախորդ տարիների շրջանավարտներին (առանց տարիքի սահմանափակման) նախապատրաստել ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետև՝ ԲՈՒՀ) ընդունելության քննություններին։

2.2.2. նպաստել մարզի անապահով ընտանիքների երեխաների ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության քննությունների նախապատրաստմանը՝ բոլոր կրթական ծրագրերի քննական առարկաներից՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված բուհական ընդունելության քննությունների ծրագրերի:

2.2.3. նպաստել մարզի դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը:

## 3.ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3.1 ԵՊՀ ԻՄ-ում նախապատրաստական դասընթացները կազմակերպում և համակարգում է Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության (այսուհետև՝ ՊԿՇՀ) բաժինը:

3.2. Նախապատրաստական դասընթացները կազմակերպվում են ընդունելության քննություններով նախատեսված առարկաներից:

3.3. Նախապատրաստական դասընթացների առարկայական ծրագրերը՝ ՀՀ բուհերի ընդունելության պահանջներին համապատասխան, մշակվում են մասնագիտական ամբիոնների կողմից և հաստատվում մասնաճյուղի փոխտնօրենի կողմից։

3.4. ԵՊՀ ԻՄ-ի նախապատրաստական դասընթացներում ընդգրկված դիմորդները, մինչև որպես ունկնդիր հրամանագրումը, կնքում են պայմանագիր ԵՊՀ ԻՄ-ի հետ։

3.5. ԵՊՀ ԻՄ-ի և ունկնդիրների (նրանց ուսման ներկայացնող անձանց, նրանց օրինական ներկայացուցիչների) հարաբերությունները կարգավորվում են կրթական ծառայությունների մատուցման պայմանագրով:

3.6. Կրթական գործընթացի մասնակիցները պարտավոր են պահպանել ԵՊՀ ԻՄ-ի հետ կնքված պայմանագրերի պահանջները:

3.7. Նախապատրաստական դասընթացների ուսման վարձը սահմանվում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար: Վճարումը

կատարվում է բանկային փոխանցումների միջոցով «ԵՊՀ ԻՄ» հաշվեհամարին՝ յուրաքանչյուր ամիս կամ միանվագ ձևով: Դասընթացների համար նախատեսված մեկ ամսվա վճարումը կատարվում է մինչև տվյալ ամսվա 10-ը:

3.8. Նախապատրաստական դասընթացների ժամանակացույցը կազմում է ՊԿՇՀ բաժինը, իսկ հաստատում է ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրենը:

3.9. Նախապատրաստական դասընթացներն իրականացնում են ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները: Նախատեսված լսարանային ժամերը հաշվառվում և դրանց համար վճարումը իրականացվում է ժամավճարային հիմունքներով առանձին սանդղակով՝ նախապատրաստական դասընթացներից հավաքագրված մուտքերի հաշվին:

3.10. Դասընթացներն անցկացվում են ակադեմիական խմբերով, որոնք կարող են ձևավորվել 3-ից ոչ պակաս ունկնդիրների առկայության դեպքում:

3.11. Ունկնդիրները կարող են մասնակցել մեկ կամ մի քանի առարկաների համար կազմակերպվող դասընթացներին:

3.12. Նախապատրաստական դասընթացների ունկնդիրների համար կազմակերպվում են երկարաժամկետ (ութամսյա) և արագացված (երկամսյա) դասընթացներ: Ութամսյա նախապատրաստական դասընթացները կազմակերպվում են յուրաքանչյուր ուստարվա հոկտեմբեր-մայիս, իսկ արագացված դասընթացները՝ նոյեմբեր-դեկտեմբեր, ապրիլ-մայիս ամիսների ընթացքում:

3.13. Երկարաժամկետ նախապատրաստական դասընթացների ունկնդիրների գիտելիքների նախնական մակարդակին համապատասխան խմբեր ձևավորելու նպատակով ՊԿՇՀ բաժինը բոլոր հանրակրթական առարկաներից նախապես անցկացնում է թեստավորում:

3.14. Նախապատրաստական դասընթացներն իրականացվում են առկա և/կամ առցանց ուսուցմամբ:

3.15. Դասընթացները կազմակերպվում են շաբաթական երկու անգամ, 2 ակադեմիական ժամ (80 րոպե) տևողությամբ՝ դպրոցների ուսումնական պարապմունքներից հետո:

3.16. Նախապատրաստական դասընթացներում ուսուցումն իրականացվում է դասախոսությունների, գործնական աշխատանքների և խորհրդատվությունների ձևով:

3.17. Նախապատրաստական դասընթացների մասնակիցների դիմումներն ընդունում է ՊԿՇՀ բաժինը և փոխանցում Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման

բաժին՝ սահմանված կարգով դրանք գրանցելու համար:

3.18. Դիմումներն ընդունվում են մինչև դասընթացների սկսվելը՝ առկա և առցանց եղանակով:

3.19. Սովորողները նախապատրաստական դասընթացների ունկնդիր ձևակերպվելու համար ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- անձնագիր (ծննդյան վկայական),
- 2 լուսանկար,
- ուսման սահմանված վճարի անդորրագիր (առնվազն մեկ ամսվա վճարի չափով):

3.22. Անչափահաս ունկնդրի համար դիմումը ներկայացնում և պայմանագիրը կնքում է նրա ծնողը կամ օրինական ներկայացուցիչը:

3.23. Նախապատրաստական դասընթացներից ունկնդիրներին հեռացնելու կարգը սահմանվում է մասնաճյուղի ներքին կարգապահական կանոններով:

## 4.ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

4.1. Դասընթացների կազմակերպման և անցկացման ընդհանուր վերահսկողությունն իրականացնում է ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրենը:

4.2. Դասընթացների իրականցումը, համաձայն համապատասխան առարկայական ծրագրերի թեմաների և բովանդակության, ապահովվում է դասավանդող դասախոսի կողմից:

4.3. Պարապմունքի ընթացքում ունկնդիրների հաճախելիության ստուգումը պարտադիր է, ինչը հավաստվում է համապատասխան մատյանում դասը վարող դասախոսի ստորագրությամբ:

4.4. Դասընթացների անցկացման վերահսկողությունն իրականացվում է ՊԿՇՀ բաժնի կողմից:

## 5. ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Նախապատրաստական դասընթացների ունկնդիրներն իրավունք ունեն՝

- ստանալ որակյալ կրթություն՝ համաձայն ուսուցման ընտրված ծրագրի,
- օգտվել ԵՊՀ ԻՄ-ի նյութատեխնիկական բազայի ընձեռած հնարավորություններից,
- ընթացքում փոխել նախապատրաստման ուղղվածությունը:

5.2 Նախապատրաստական դասընթացների ունկնդիրները պարտավոր են՝

- սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը,
- սահմանված ժամկետներում կատարել հանձնարարված առաջադրանքները,
- պահպանել ԵՊՀ ԻՄ-ի ներքին կարգապահական կանոնները:

## 6. ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույնը կարգը հաստատում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը:

6.2. Կարգում փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել Մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ՝

6.2.1. Մասնաճյուղի տնօրենի,

6.2.2. Գիտական խորհրդի անդամների,

6.2.3. Որակի կառավարման հանձնաժողովի առաջարկություններով: